



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական թեման՝ Քերականության ուսուցումը որպես խոսքային հաղորդակցման և կարողությունների զարգացման միջոց;

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Թեհմինե Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Թալինի թիվ 1 հիմնական դպրոց

Երևան 2022

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1: ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԿԱՎՈՐՈՒՄ և ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.....	4
ԳԼՈՒԽ 2: ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ .....	6
ԳԼՈՒԽ 3: ԻՆՉՊԵՍ ՄԱՏՈՒՑԵԼ ՆՈՐ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ .....	10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն այն հիմնական միջոցն է որի օգնությամբ մարդն արտահայտում է ինքն իրեն և իրականացնում այլ մարդկանց հետ իր փոխադարձ սոցիալական շփումը: Մարդը խոսելիս օգտագործում է բազմաթիվ քերականական, լեքսիկական և հնչյունաբանական կանոններ: Լեզվական հմտություններն օգնում են մեզ ընտրելու տարբեր բառեր և օրինակներ մեր խոսքը կառուցելիս: Լեզվի քերականության մասին խոսելը, կանոնները անգիր ասելը միանգամայն տարբերվում են տվյալ լեզվով խոսելու, հասկանալու, գրելու և կարդալու հմտություններից: Հաճախ կանոններն անգիր ասողները անկարող են խոսել տվյալ լեզվով, իսկ խոսողներն էլ անկարող են որևէ կանոն անգիր ասել և կամ օգտագործել դրանք: Քերականությունը ձևակերպում է բառապաշարը և որպես արդյունք մենք ունենք իմաստային խմբեր:

Իսկ ինչ հմտություններ է զարգացնում քերականությունը: Նախ և առաջ այն տալիս է ճիշտ նախադասություններ կազմելու ունակություն: Հատուկ քերականական կառուցվածքներն օգնում են աշակերտներին նշելու մայրենի լեզվի և ուսումնասիրվող լեզվի միջև գոյություն ունեցող տարբերությունները:

**Լեզուն** հասկանալու և ճիշտ արտահայտվելու համար մարդ պետք է ճիշտ օգտագործի ուսումնասիրվող լեզվի քերականական միջոցները: Մարդը կարող է իմանալ նախադասության բոլոր բառերը և այնուամենայնիվ չհասկանալ նախադասությունը, եթե չի տեսնում կապը տվյալ նախադասության բառերի միջև: Եվ ընդհակառակը, նախադասության մեջ կարող են լինել մեկից էլ ավել անծանոթ բառեր, բայց լավ գիտենալով տվյալ լեզվին բնորոշ կառուցվածքը, մարդ կարողանա հեշտությամբ գուշակել այդ բառերի իմաստը կամ գոնե ճիշտ օգտվել բառարանից: Հնարավոր չէ խոսել առանց քերականական գիտելիքների, առանց քերականական մեխանիզմների տիրապետելու: Դպրոցական ծրագրով նախատեսված անգլերենի իմացությունը չի կարող ապահովվել առանց քերականության ուսուցման: Սովորողներին անհրաժեշտ է քերականությունը, որպեսզի վերջիններս կարողանան խոսել, լսել, կարդալ և գրել ուսումնասիրվող լեզվով:

# ՉԼՈՒԽ 1: ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Զարգացնել մեկի խոսքը նշանակում է ձեռք բերել խոսքային նմուշ օրինակներ և հատկապես քերականական նմուշ օրինակներ: Երեխաները պետք է օգտագործեն սրանք իրենց խոսքում ինքնաբերաբար: Քերականական այս միջոցների ինքնաբերաբար օգտագործումը ենթադրում է տիրապետել որոշակի հմտությունների, այն է քերականական միջոցների օգտագործումը սեփական մտքերն արտահայտելու, այլ կերպ ասած նախադասություններ կազմելու համար: Այսպիսով մենք ձեռք ենք բերում այսպես կոչված վերարտադրողական (**reproductive**) կամ ակտիվ քերականական հմտություններ:

Որևէ քերականական հմտություն ձևավորելու համար անհրաժեշտ են որոշ քայլեր: Եթե երեխան կարողանում է իր նախադասությունները կազմել արագ և քերականական տեսակետից ճիշտ ուրեմն նա ունի քերականական հմտություններ:

Վերարտադրողական (**reproductive**) խոսքի քերականական հմտությունների հիմնական դժվարությունը կայանում է նախադասության նպատակին համապատասխանելը, հաղորդակցական մոտեցումը, բառերը, իմաստը արտահայտված քերականական նմուշ-օրինակներով: Այդ դեպքում մենք օգտագործում ենք հիմնական նախադասությունները, պատասխանելու համար որոշակի իրավիճակի:

Քերականություն ասելով մեկը կարող է հասկանալ բառերի իմաստի ճիշտ ըմբռնումն ու գործածությունը հաղորդակցության ժամանակ: Այս գիտելիքը պահանջվում է երեխայի մայրենի լեզվից նախքան դպրոց գնալը:

Նա գաղափար չունի լեզվի համակարգի, նրա վերջավորությունների, եզակի և հոգնակի թվերի և այլ քերականական կանոնների մասին: Նրա երիտասարդ միտքը արագ վերցնում է փաստերը և կազմում քերականական հասարակ "կանոններ" բառերը դասավորելու, հետաքրքիր մտքեր ու զգացողություններ արտահայտելու համար: Երբեմն երեխաները սխալվում են կիրառելով այս կամ այն ընդհանուր քերականական կանոնը այն բառերի հետ որոնք տվյալ կանոնին չեն ենթարկվում: Օրինակ՝ երեխան կարող է ասել "To mans comed" փոխանակ ասելու "To men come", որովհետև նա օգտագործում է հոգնակի թիվը կազմող "-s" կանոնը "man" բառի համար և անցյալի "-ed" վերջավորությունը "come" բառի համար, որը չի համապատասխանում այդ կանոնների կիրառմանը:

Մեզ անհրաժեշտ է ամենապարզ և ամենակարճ քերականություն, որը կհամապատասխանի դպրոցում օտար լեզվի ուսուցման ծրագրի պահանջներին: Այդ քերականությունը պետք է լինի բավականին պարզ յուրացնելու և հիշելու համար: Չի կարելի ասել թե այս խնդիրը լուծվել է:

**Քերականական նյութի ընտրությունը** պետք է լինի նպատակային: Գոյություն ունեն քերականական նյութի ընտրության սկզբունքներ և խոսելու ուսուցման (**active minimum**), և ընթերցելու հմտությունների ուսուցման (**passive minimum**) համար: Ամենակարևոր սկզբունքը հաճախականությունն է, այսինքն, որքան հաճախ է այս կամ այն քերականական երևույթը հանդիպում մեր խոսքում: Օրինակ, ներկա անորոշ (**Present Simple**) ժամանակաձևը շատ հաճախ է հանդիպում և ամենօրյա խոսքում, և տեքստերում: Այդ պատճառով էլ այն պետք է ընդգրկվի քերականական մինիմումի մեջ:

Ընթերցանության նպատակով քերականական նյութի ընտրությունը նույնպես չափազանց կարևոր է:

Սովորողները պետք է կարողանան տարբերակել քերականական այնպիսի երևույթներ, որոնք ծառայում են արտահայտելու համար տարբեր իմաստներ. օրինակ՝ (**-s**) և (**'s**):

Քերականական նյութի ուսուցման բովանդակությունը վիճելի է ուսուցիչների և մեթոդիստների միջև և կան տարբեր մոտեցումներ այս հարցին: Սովորողները պետք է ըստ դասընթացի բովանդակության յուրացնեն բառերի ճիշտ գործածությունն ու կազմեն նախադասություններ, կարողանան հեշտությամբ ճանաչել քերականական ձևերն ու կառուցվածքները լսելիս և ընթերցելիս, վերարտադրեն դարձվածներն ու նախադասությունները որ ունեն իրենց հիշողության մեջ, ասեն կամ գրեն իրենց սեփական նախադասությունները, օգտագործելով իրավիճակին համապատասխան քերականական նյութը:

Ոչ ոք հաստատ չգիտի ինչպես են մարդիկ սովորել լեզուներ, չնայած որ մեծ քանակությամբ հետազոտություններ են կատարվել այդ ուղղությամբ, ունենալով տարբեր աստիճանի հաջողություններ կամ ձախողումներ:

## ՉԼՈՒԽ 2: ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Պետք է հաշվի առնել, որ **մեթոդները**, որոնք կիրառվում են երեխաներին օտար լեզու սովորեցնելիս, պետք է խթան հանդիսանան նրանց ուսումնառության համար: Եթե այդ մեթոդը անասելի ձանձրալի է սովորողների համար, ապա դասընթացը կլինի անհետաքրքիր: Երեխաներերը էապես տարբերվում են չափահասներից: Նրանք հետաքրքրասեր են, նրանց ուշադրությունը կարճատև է, նրանց խթանումը բոլորովին տարբերվում է մեծահասակներից և հետաքրքրությունները ավելի քիչ են մասնագիտացած: Նրանք կարիք ունեն ակտիվության հաճախականության, սիրում են ակտիվ գործունեություն, որը նրանց համար ավելի հետաքրքիր է և հուզիչ:

Քերականական նյութերի ուսուցման նպատակով օգտագործվում են տարբեր մեթոդներ: Դրանցից է **թարգմանական մեթոդը**: Սա սովորականից ավելի բարդ մտածողություն է պահանջում: Թարգմանություններ մայրենի լեզվից օտար լեզու և հակառակը:

Այս մեթոդը հիմնականում բնութագրվում է հետևյալ կերպ.

1. Դասերը հիմնականում ուսուցանվում են մայրենի լեզվով, ուսուցանվող լեզուն շատ քիչ է օգտագործվում:
2. Բառապաշարի օգտագործումը հիմնականում առանձին բառերի տեսքով է:
3. Տրվում են քերականության վերաբերյալ երկարաշունչ բացատրություններ:
4. Քերականությունն ապահովում է բառերի միացումը, իսկ ուսուցումը հաճախ կետրոնանում է բառերի ձևի և ելևէջի վրա:
5. Դժվար դասական տեքստերի ընթերցումը սկսվում է ավելի վաղ:
6. Քիչ ուշադրություն է դարձվում տեքստերի բովանդակություններին, որոնց վերլուծում են որպես քերականական վերլուծական վարժություններ:
7. Ուշադրություն չի դարձվում արտասանությանը

Այս ամենը բերում է սովյալ մեթոդի այսօրվա պահանջների անհամապատասխանությանը:

Քերականության դասավանդման **ուղիղ (direct)** մեթոդը ենթադրում է, որ օտար լեզու սովորելը նույնն է ինչ մայրենին սովորելը, այն է, սովորողի ուղղակի հաղորդակցումը օտար լեզվի կրողի հետ կատարյալ ազդեցություն է ունենում սովորողի մտքի վրա: Սա ճշմարիտ է մայրենիի համար, քանի որ երեխան ուրիշ

հնարավորություն չունի ինքնաարտահայտման: Երկրորդ լեզուն սովորելիս ձգտումը զգալիորեն պակասում է, քանի որ սովորողը գիտի, որ ինքը կարող է հաղորդակցվել իր մայրենի լեզվով անհրաժեշտության դեպքում: Ի մի բերելով ուղիղ մեթոդի առաձնահատկությունները կարելի է ասել հետևյալը.

1. Ուսուցիչը դասավանդում է բացառապես ուսուցանվող լեզվով:
2. Միայն ամենօրյա բառապաշար ու բառարանն է ուսուցանվում:
3. Բանասիրական հաղորդակցական հմտությունները կառուցվում են ուշադիր, զարգացման ժամանակային կարգով, կազմակերպված փոխադարձ հարց-պատասխանի ձևով ուսուցիչ – աշակերտի միջև:
4. Քերականությունը ուսուցանվում է ինդուկտիվ ձևով, քերականական կանոնները բացահայտվում են օրինակների ուսումնասիրության արդյունքում:

5. Որոշակի բառապաշար է ուսուցանվում դիդակտիկ նյութերի միջոցով, իսկ վերացական բառարանը մտքերի զարգացման միջոցով:

**Աուդո- լեզվաբանական մեթոդը (ALM)** հաջողված է շնորհիվ իր բարձր խթանիչ միջոցների, լարված գործնական կիրառության, փոքր դասերի, լավ նմուշ օրինակների և օտար լեզվի և նրա քերականությունների լեզվաբանության գրագետ նկարագրությունների :

Ուսուցումը տրվում է հետևյալ կերպ. որոշ հիմնական նախադասություններ հիշվում են նմանակմամբ: Դրանց իմաստը տրվում է նորմալ մայրենի լեզվով և սովորողները բառացի թարգմանության կարիք չունեն: Ի վերջո կատարվում է երկխոսությունների կիրառումը հիմնականում նախադասությունների և բառամիացությունների գործածությամբ:

ԱԼՄ – ին բնորոշ առաձնահատկություն են՝

1. Նոր նյութի մատուցումը երկխոսությամբ:
2. Կապվածություն կա նմանակման, հիշելու և հիմնական դարձվածները սովորելու միջև:
3. Հակադիր վերլուծութրան միջոցով կառույցները հերթագայվում են և ուսուցանվում են միաժամանակ:
4. Կառուցվածքային օրինակները ուսուցանվում են կրկնողական վարժությունների օգնությամբ:
5. Քերականական բացատրություն չկա կամ շատ քիչ է:
6. Բառապաշարը ուսուցանվում է տեքստի համաձայն:
7. Մեծ կիրառություն ունեն ձայնագրությունները, լաբորատորիան և դիդակտիկ նյութերը:
8. Մեծ ուշադրություն է դարձվում արտասանությանը և այլն:

Յուրաքանչյուր մեթոդ ունի իր **տեխնիկան**: Տեխնիկա ասելով հասկանում ենք այն յուրահատուկ միջոցը, որի օգնությամբ ինչ որ բան է արվում ուսուցման ընթացքում որոշակի նպատակի հասնելու համար:

Կրտսեր դպրոցականների համար կիրառելի է ուղիղ (**Direct**) մեթոդը և տեխնիկական տարբեր միջոցներ կարելի է կիրառել զարգացնելու երեխայի լսելու, ըմբռնելու և խոսելու ունակությունները: Սովորողներին տրվում են զանազան վարժություններ իրավիճակին համապատասխան բառերի և նմուշ օրինակների կիրառման համար:

Ուսուցիչը պետք է հիշի հետևյալը՝ որքան շատ են բացատրությունները ,այնքան ավելի անհասկնալի է դասը: Ամենալավ մեթոդը գործնական կիրառումն է, այսինքն այն ինչը անհրաժեշտ է հաղորդակցման համար:

Ապացուցված է և ընդունված ուսուցիչների և մեթոդիստների մեծ մասի կողմից, որ երբ ուսուցման նպատակը մասնավորապես խոսել սովորեցնելն է ապա հարմար է քերականության կառուցողական մոտեցումը:

Քերականության ուսուցման այս մոտեցումը ընդունված է մեր դպրոցականների կողմից, քանի որ այն թույլ է տալիս աշակերտներին կազմել նախադասություններ նմանօրինակման միջոցով, օգտագործելով նույն նմուշի նախադասությունների կառուցվածքը տարբեր իրավիճակներում, և գրավոր, և բանավոր խոսքում :

Ուսուցիչը պետք է ապահովի սովորողներին համապատասխան բառապաշարով, որը հնարավորություն կտա նրանց օգտագործել նմուշ-նախադասությունները լեքսիկական իմաստը փոփոխելով: Այն պետք է ուսուցանի նախադասություն-նմուշում ընդգրկված մեխանիզմը և ոչ թե նախադասությունը:

Քերականության ուսուցումը պետք է իրականացվի համապատասխան իրավիճակներում: Օրինակ՝ ստացական հոլովը (**Possessive Case**) կարելի է բացատրել դասարանում աշակերտների իրերի պատկանելիությունը բացահայտելով:

Ուսուցիչը պետք է խնամքով ընտրի այդ իրավիճակները:

Քերականական երևույթները, որոնց կարիքը սովորողները զգում են գրույցի ընթացքում ուսուցանվում են բանավոր մոտեցմամբ: Սովորողները լսում են այն, կատարում զանազան բանավոր և գրավոր վարժություններ: Օրինակ՝ (**Simple Present**) անորոշ ներկա ժամանակաձևի անհրաժեշտությունը առկա է սովորաբար, կրկնվող գործողություններ ներկայացնելիս: Ուսուցիչը որպես իրավիճակ կարող է ներկայացնել **“My Day”** թեման և սովորողները խոսելով այդ թեմայով



կոգտագործեն նաև այդ ժամանակաձևը: Այս դեպքում պետք է ընտրվի բանավոր մոտեցման մեթոդ:

Եթե տվյալ քերականական նյութը սովորողին անհրաժեշտ է ընթերցանության մեջ, ուսուցիչը պետք է սկսի այնպիսի նախադասություններ կարդալով ու գրելով որոնց մեջ առկա է տվյալ քերականական երևույթը: Քերականական նյութի յուրացման ընթացքում սովորողները կարող են ունենալ երեք տիպի դժվարություններ՝ ձևի, իմաստի և գործածության: Ուսուցիչը պետք է մտածի միջոցներ այդ դժվարությունները հաղթահարելու համար: Դա կարող է լինել մայրենի լեզվի օգտագործում, իրավիճակների ստեղծում, կանոնների վերհիշում, համապատասխան վարժությունների ընտրություն: Նա պետք է ընտրի նաև թե ինչպես ներկայացնի քերականական նյութը, ինչպիսի աշխատանքներ հանձնարարի՝ գույգերով, խմբային, ինքնուրույն: Եվ միշտ պետք է հիշել, որ նյութի յուրացման համար, սովորողները կարիք ունեն նմուշ-օրինակ նախադասությունների, որոնցում ներառված է տվյալ քերականական երևույթը:

### **ՊԼՈՒԽ 3: ԻՆՉՊԵՍ ՄԱՏՈՒՑԵԼ ՆՈՐ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ**

Ուսուցիչը պետք է պատրաստված լինի օգտագործելու զանազան տեխնիկական միջոցներ օգնելու սովորողներին յուրացնելու անհրաժեշտ քերականական նյութը: Դա երբեմն ներառում է քերականական կանոններ, երբեմն էլ նշանակում է թույլ տալ սովորողին ինքնուրույն բացահայտել կանոնները:

Սովորողը պետք է գաղափար ունենա ինչպես է օգտագործվում տվյալ օտար լեզուն լեզվակիր մարդկանց կողմից և դրա ամենալավ միջոցը լեզուն համատեքստում ներկայացնելն է: Համատեքստը պետք է հետաքրքիր լինի երեխաների համար: Այն պետք է լինի տեղեկատվական, հետաքրքիր և մատչելի: Ուսուցչի աշխատանքներից մեկն էլ այն է, որ ցույց տա թե ինչպես է կազմվում նոր լեզուն, ինչպես է օգտագործվում քերականությունը և ինչպես են նրանք համատեղվում:

Նոր լեզուն ներկայացնող մոդելը կարող է ունենալ հինգ բաղադրամաս՝ ներկայացնող, արձագանքող, բացատրական, ճիշտ վերարտադրողականություն, անմիջական ստեղծագործական:

Առաջին փուլում ներկայացվում է համատեքստը և ցուցադրվում լեզվի իմաստը կամ կիրառումը:

Արձագանքող փուլում ուսուցիչը փորձում է պարզել, արդյոք սովորողը կարող է արտաբերել նոր լեզուն: Կախված այս փուլում սովորողի ցուցաբերած ունակություններից ուսուցիչը որոշում է թե որն է լինելու հաջորդ փուլը: Եթե, օրինակ, սովորողը բոլորովին չի կարողանում արտաբերել պետք է շարժվել բացատրության փուլ: Իսկ եթե սովորողը դա անում է քիչ սխալներով կարելի է շարժվել ճիշտ վերարտադրության փուլ և վերանայել նկատված սխալները: Այս փուլում ուշադրությունը ավելի շատ կետրոնացվում է ճիշտ արտասանության քան իմաստի և գործածության վրա: Ուսուցիչը պետք է համոզված լինի, որ սովորողները կարող են կազմել նոր լեզուն ճշգրտորեն օգտագործելով քերականական կանոնը, և կատարելագործել իրենց արտասանությունը այնքան որքան անհրաժեշտ է:

Քերականությունը օգտագործում են նույնիսկ այն երեխաները, որոնք երբևէ չեն սովորել քերականական կանոններ: Դա արտահայտվում է նրանց թույլ տված սխալներում: Քերականության մեջ նմուշ օրինակների դերը կայանում է նրանում, որ դրանց յուրացումը հնարավորություն է տալիս օգտագործել նոր բառապաշարը հին նմուշների օգնությամբ: Օտար լեզվի նմուշ օրինակների յուրացման հեշտ կամ դժվար լինելը կախված է մայրենի լեզվում նրանց ունեցած նմանությունից: Մայրենի լեզվում այդ օրինակների առկայությունը

հնարավորություն է տալիս սովորողներին սովորած նոր բառերը օգտագործել մայրենիում յուրացրած նմուշ նախադասություններում, ընդարձակելով դրանք: Եթե սովորողի բառապաշար սովորելու ունակություններ բարձր են, նա ցուցաբերում է արագ առաջընթաց:

Ռոբերտ Լադոն գտնում է, որ երկարաշունչ բացատրությունները առանց գործնական կիրառման ժամանակի վատնում են, քանի որ դա անարդյունավետ է: Դասի մեծ մասը պետք է տրամադրվի գործնական պարամունքին, և ուշադիր պետք է լինել սովորողների սխալների նկատմամբ:

Ինչպես ուղղել սովորողի սխալը: Դրա համար կան բազմաթիվ միջոցներ.

- խնդրել որ աշակերտը կրկնի ասածը,
- կրկնել սովորողի ասածը հարցական հնչերանգով, երբեմն ավելի արտահայտիչ արտաբերելով սխալ բառը,
- պարզապես նշել որ սխալ է, բայց անել դա այնպես, որ անվստահություն չառաջացնի,
- Is that correct? - հարցը ուղղել լսարանին,
- արտահայտել վերաբերմունքը կատարված սխալի նկատմամբ ժեստի կամ դիմախաղի միջոցով;

Ընդհանուր առմամբ սխալի նշումը պահանջում է տակտ և հարգալից վերաբերմունք: Այն պետք է դիտվի որպես դրական գործնություն և ոչ որպես հանդիմանություն: Սակայն սովորողի սխալը նշելը դեռևս բավական չէ, սխալը ուղղելու համար ևս ուսուցիչը պետք է օգտագործի որոշ միջոցներ: Օրինակ՝ սխալը ուղղել մյուս սովորողների օգնությամբ կամ ուղղել սովորողի սխալը նորից բացատրելով նյութը:

Նպատակն այն է, որ երեխան ճիշտ սովորի լեզուն և օգտագործի սովորածը իր խոսքում: Միայն այս դեպքում կարելի է համոզվել որ երեխան ճիշտ է հասկացել և յուրացրել նյութը:

Որոնք են այն դժվարությունները որ ունեն աշակերտները սովորելու ընթացքում: Առաջին հերթին մայրենի լեզվի քերականական մեխանիզմների փոփոխելն է ուսումնասիրվող նոր լեզվի: Եվ իրոք, յուրաքանչյուր լեզու ունի բառերը կապակցելու, հարմարեցնելու իր ձևը: Անգլերենում շատ կարևոր է բառերի շարադասությունը, որն ի տարբերություն հայերենի շրջուն չէ:

Օրինակ՝ Tom gave Helen a rose.

Եթե փոխենք նախադասության շարադասությունը կփոխվի նաև իմաստը՝

Helen gave Tom a rose.

Ենթակայի և ստորոգյալի տեղափոխության դեպքում կարող է փոխվել նաև նախադասության տեսակը: Օրինակ՝ You are.../ Are you...?

Ժամանակների համաձայնեցման երևույթը նույնպես դժվարություն է ներկայացնում սովորողների համար: Դժվարություն է ներկայացնում նաև մոդալ բայերի կիրառությունը տարատեսակ նախադասություններում: Սովորողը պետք է հիշի, թե որ բայը ինչ տիպի նախադասություններում է օգտագործվում: Օրինակ՝ Must I do it? /- No, you needn't.

May I go home? /- No, you mustn't.

Անգլերենի քերականության ամենադժվար կետերից մեկն էլ հոդն է (**article**), որի գործածության նկատմամբ սովորողները այնքան էլ ուշադիր չեն: Կարևորվում է նաև կառուցողական **this-these / that-those** բառերի գործնական կիրառությունը թե գրավոր և թե բանավոր խոսքում:

Քերականության ուսուցման և խոսքի ճիշտ կառուցման համար շատ կարևոր են վարժությունները: Դրանք լինում են տարբեր տիպի.

1. Ճանաչողական – Այս վարժության կատարման համար անհրաժեշտ է, որ լինի բնական հաղորդակցություն՝ կարդալ կամ լսել: Օրինակ՝ լսել տեքստը և ձեռք բարձրացնել Past Simple ժամանակաձև լսելիս:

I lived in London last year.

She gets up at seven o'clock.

Yesterday she got up at half past seven.

2. Ընթերցել նախադասությունը տրված բայերը՝ դնելով ճիշտ ծամանակաձևով: Օրինակ՝

I (go, went) to school yesterday.

Tom (took, takes) a bus when he goes to school.

3. Կրկնողական վարժություններ - Վարժությունների այս տիպը էական նշանակություն ունի օտար լեզվի ուսուցման համար: Նրանք ոչ միայն լսում և տեսնում են այլև արտաբերում՝ կրկնում ուսուցչից հետո, նմանեցնելով նրա խոսքին: Օրինակ՝

Teacher: They are dancing in the park.

Սովորողները կրկնում են ուսուցչից հետո խմբով ապա անհատական: Կամ ունկնդրում են երկխոսությունը և կրկնում խոսողից հետո:

Ուշադրություն է դարձվում նախադասության ճիշտ արտասանությանը, իմաստային խմբերին և հնչերանգին:

4. Փոխարինող վարժություններ - սովորողները փոխարինում են բառը կամ արտահայտությունը նմուշ\նախադասությունում: Օրինակ՝

The children are dancing in the **park**.

The children are dancing in the **yard**.

The children are dancing in **at the party**.

Այս նախադասության մեջ ընդգծված բառը փոխարինված է այլ բառերով և կարելի է այսպես շարունակել: Այս վարժությունները կարող են ուղեկցվել նկարների ցուցադրությամբ, կարելի է առաջարկել հայերեն տարբերակը, որը աշակերտները տեղադրում են մտածելով բառերի ոչ թե քերականական նյութի մասին:

Այս տիպի նախագծերը կարող են կատարվել և բանավոր և գրավոր:

5. Ստեղծագործական վարժություններ-Սա վարժությունների ամենադժվար տեսակն է, քանի որ սովորողներից պահանջում է ստեղծագործական աշխատանք: Դրանք կարող են լինել ուսուցչի կողմից ցուցադրվող նկարի հիման վրա: Աշակերտներին առաջարկվում է գրել չորս-հինգ նախադասություններ նշված ժամանականձևով:

Առաջարկված ժամանակաձևով (օր, past indefinite) հարց ու պատասխաններ աշակերտների միջև:

6. Ուսուցչի կողմից առաջարկվող իրավիճակային վարժություններ.

Օրինակ.՝ մի աշակերտը հրաման է արձակում, երկրորդը կատարում է, իսկ երրորդը նկարագրում է, թե ինչ գործողություն է կատարվում:

Pupil 1: Go to the door, Aram.

Pupil 2: Aram is going to the door.

- Խոսել առաջակված թեմայով “ What I did yesterday ”

- Կարդալ, լսել, պատմել:

- Թարգմանել հայերենից անգլերեն:

Վերոհիշյալ բոլոր վարժությունները նպաստում են զարգացնելու սովորողների քերականական ձևերը ճանաչելու և ընթերցանության հմտությունները, օգնելու սովորողներին կազմելու սեփական նախադասություններ, օգտագործելով քերականական երևույթները, արտահայտվելու ըստ իրավիճակի և թեմայի կամ գրել շարադրություն ընթերցված տեքստի վերաբերյալ:

Սովորողի քերականական նյութի յուրացման աստիճանը կարելի է պարզել նաև թեստերի օգնությամբ:

Թեստը հնարավորություն է տալիս արժեվորել սովորողների ձեռքբերումները: Քերականության վերաբերյալ թեստը կարող է ընդգրկել հետևյալ աշխատաքները՝.

- a) լրացնել բաց թողումները
- b) բացել փակագծերը
- c) ձևափոխել նախադասությունները (դաձնել հարցական, ժխտական)
- d) ընդարձակել նախադասությունը
- e) թարգմանել և այլն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, որպեսզի հասկանանաք և ճիշտ արտահայտվենք որևէ լեզվով, պետք է սովորենք տվյալ լեզվի քերականական մեխանիզմները: Իրոք, մարդ կարող է իմանալ տվյալ նախադասության բոլոր բառերը, բայց չհասկանալ իմաստը, եթե չի կարողանում տեսնել տվյալ նախադասության բառերի միջև եղած կապը: Հնարավոր չէ բանավոր խոսքով, առանց քերականական գիտելիքների, առանց քերականական մեխանիզմների: Երեխանրը կարք ունեն քերականական գիտելիքների, խոսելու և գրելու համար ուսումնասիրվող լեզվով:

Սովորողներին քերականական գիտելիքների ուսուցումը հետապնդում է մի նպատակ, այն է՝ երեխաներին օգնել խուսափելու իրեն խոսքում սխալներից, հասկանալ լսած տեքստը և մասնակցել գրույցին:

Մենք ուսումնասիրում ենք քերականական երկու հմտություններ՝ վերարտադրողական (reproductive) և ընկալման (receptive): Վերարտադրողականության (reproductive) հմտությունները օգնում են աշակերտների հաղորդակցությանը, իսկ ընկալման (receptive) հմտությունները հնարաորության են տալիս կարդալ, լսել և հասկանալ:

Քերականական հմտությունների ձևավորումը կախված է գործնական ուսուցումից, որը շատ կարևոր է հասկանալու համար քերականական նյութը(երևույթը): Մենք պետք է շատ վարժություններ կատարենք քերականության ուսումնասիրության համար: Պետք է ապահովել անգլերեն լեզվի ուսուցման խթանումը, խրախուսել երեխաներին հաղորդակցվել և հիշել՝ սկզբնական փուլում սխալների ուղղումը կարող է ունենալ բացասական ազդեցություն, այն է՝ ա) ինքնավստահության կորուստ( երբ վախենում ենք սխալվելուց) բ) երեխաները դառնում են անհամարձակ և ասում են այն ինչ գիտեն կամ կարող են:

Հաշվի առնելով գործնական ուսուցման կարևորությունը՝ չպետք է մոռանալ երեխաների նկատմամբ նաև անհատական մոտեցման մասին:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <<Օտար լեզուները Հայաստանում>> գիտամեթոդական հանդես, 2014թ., հ2 և 3:
2. Լ. Տոնոյան <<Հաղորդակցական քերականության սկզբունքների կիրառումը անգլերենի դասընթացում>>, 2012թ.:
3. Անգլերենի ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր, Երևան , Անտարես, 2008թ.:
4. [www.teachingenglish.org](http://www.teachingenglish.org) :